

**ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՋՐՅԱ ԱՎԱԶԱՆԻ
ԳԻՏԱԿԱԶԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ
12 հունիսի – 2 հուլիսի, 2010թ.**



Սուգումներն իրականացվեցին հունիսի 22-ից մինչև 30-ը, 7 սուգորդների մասնակցությամբ, որոնցից երկուսը ֆրանսիացիներ էին: Ինչպես նաև, ներկա էին Երկրաբանական գիտությունների իստիտուտից երկու երկրաբաններ՝ Արայիկ Ավագյանը և Պետրոս Թոզալաբյանը :



Առաքելության ողջ ընթացքում ուսումնասիրություններն անց էին կացվում փոքրիկ փշովի մոտորանավակի օգնությամբ, որը մեզ տրամադրվել էր «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:



Ձեռք բերվեցին ջրային և նստավծրային նմուշներ, իրականացվեցին ջերմաստիճանային չափումներ: Բերդկունք գյուղի մոտ սուգորդները կատարեցին նաև խեցգետինների հաշվարկ որոշակի միավոր տարածքի համար:



Մակերևույթից կատարված հետազոտությունների արդյունքում չհաջողվեց գտնել լճի ընդերքի ենթադրվող հրաբուխը, բայց գիտնականների խումբը ճշգրտորեն դիրքորոշեց մոտ 35մ խորության վրա տեղակայված հնէաբանական հովիտը, որտեղ և հետագայում հնարավոր է իրականացվեն հնագիտական ուսումնասիրություններ:



Հատկանշական է, որ հետազոտությունների ընթացքում բացահայտվեցին երկու շատ կարևոր ջրային հոսանքներ Մեծ և Փոքր Սևանները կապող նեղուցում: Ձեռք բերվեցին համապատասխան ջրային նմուշներ, տեսագրություններ, կատարվեցին ջերմաստիճանային չափումներ:



Հայտնաբերվեցին բազմաթիվ հնէաբանական գոտիներ, ինչպես նաև երկու հնագիտական վայր, որոնցից մեկը հետազոտությունների վերջում:



Ստորջրյա հետազոտությունները լայնորեն լուսարանվել են հայկական գլխավոր հեռուստաալիքներով և մամուլում, որտեղ օգտագործվել են Ստեֆան Կոջայանի կողմից ձեռք բերված լուսանկարներն ու տեսանյութերը: